



# Armenian National Committee - Middle East الهيئة الوطنية الأرمنية - الشرق الأوسط

## Մամուլի Հաղորդագրություն

### **Միջին Արևելքի Հայ Դատի գրասենեակի պատասխանատուի աշխատանքային այցը Եգիպտոս**

ՊԵՅՐՈՒԹ (11 Փետրուար 2008).- Միջին Արևելքի Հայ Դատի գրասենեակի պատասխանատու Վերա Եագուպեան 4-8 Փետրուար 2008-ին աշխատանքային այցելություն մը տուաւ Գահիրէ, Եգիպտոս:

Փետրուար 7-ին, ան այցելեց Արաբական Լիկայի կեդրոնը, ուր տեսակցութիւն ունեցաւ Լիկայի եւրոպական հարցերու լիազօր նախարար Մուհամմատ Ալ Ֆաթի Նասիրիի հետ: Շուրջ կէս ժամ տեւած հանդիպումին ընթացքին Վ. Եագուպեան բացատրութիւններ տուաւ գրասենեակին գործունեութեան մասին, ներկայացուց Միջին Արևելքի մէջ հայկական գաղութներուն իրավիճակը, հայութեան ներդրումը արաբական եւ իսլամական աշխարհի քաղաքական, տնտեսական, ընկերային եւ մշակութային կեանքին մէջ, ինչպէս նաեւ գնահատեց արաբ եւ իսլամ ժողովուրդներուն մարդկային վերաբերմունքը 1915-ի Ցեղասպանութենէն փրկուած հայորդիներուն նկատմամբ:

Իր կարգին Նասիրիի հետաքրքրութիւն ցուցաբերեց գրասենեակին գործունեութեան նկատմամբ եւ գործակցութեան տրամադրութիւն յայտնեց: Ան արժեւորեց հայութեան դերը արաբական երկիրներուն մէջ, յայտնելով որ հայերը եղած են տիպար քաղաքացիներ եւ լաւ օրինակ հանդիսացած են իսլամ-քրիստոնէայ գոյակցութեան:

Գրասենեակի պատասխանատուն Եգիպտոսի Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչ տոքթ. Արմէն Մազլումեանին հետ, Փետրուար 5-ին, այցելեց նաեւ ՀՀ դեսպանատուն եւ հանդիպում ունեցաւ դեսպան Ռուբէն Կարապետեանին հետ:

Վ. Եագուպեան եւ Ա. Մազլումեան այցելեցին Գահիրէի Պետական Համալսարանի Հայկական Ուսումնասիրութեանց Ամպիոնը, որուն բացումը կատարուած էր 2007-ին, ՀՀ նախագահ Ռոպերտ Զոչարեանի Եգիպտոս պաշտօնական այցելութեան ընթացքին: Ամպիոնի վարիչ տնօրէն Չէյնապ Ապու Սիննայի հետ տեսակցութեան ընթացքին սերտուեցան հրատարակութիւններ, դասախօսութիւններ եւ խորհրդաժողովներ կազմակերպելու միջոցները: Հանդիպումին ներկայ էր նաեւ «Արեւ» արաբերէն ամսաթերթի խմբագիր Մուհամմատ Ռիֆաաթ:

«Եգիպտոսը իր անցեալով եւ ներկայով կը ներկայացնէ արաբական աշխարհին սիրտը, ուր ապրած է հայկական աշխոյժ գաղութ մը եւ մեծ ներդրում ունեցած է երկրին քաղաքական, տնտեսական եւ մշակութային կեանքին մէջ: Եգիպտոսի ժողովուրդը մեծ յարգանք ունի հայ ժողովուրդին հաղէպ եւ բարձր կը գնահատէ անոր ներկայութիւնը արաբական աշխարհին մէջ», յայտնեց Վ. Եագուպեան: Ան աւելցուց, թէ « Յայ Դատի Գրասենեակը Եգիպտոսի մէջ գործող հայկական կառոյցներուն հետ կը ծրագրէ քարոզչական լայնածաւալ աշխատանքի մը, որուն նպատակն է արաբ եւ իսլամ ժողովուրդները մօտէն ծանօթացնել հայ ժողովուրդի պատմութեան եւ դատին»: